ՄԱՆՈՒԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ—Սոցիալիստական ապրելակերպը և խելամիտ պահանջմունքների ձևավորումը, *Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987, 146 էջ։*

Արդի սոցիոլոգիայի տեսական պրոբլեմներից մեկին՝ սոցիալիստական ապրելակերպին է նվիրված սույն աշխատանքը։ Գրքի առաջին երեք գլուխներում խոսվում է ապրելակերպի մարքսլենինյան կոնցեպցիայի, մշակույթի և ապրելակերպի փոխազդեցության օրինաչափությունների մասին։ Քննվում են ապրելակերպի քանակական-որակական միասնությունը, պրոբլեմները, հեռանկարները։ IV և V գլուխներում բացահայտվում են վերակառուցման և «խելամիտ հայտերի» խնդիրները, որոնք կապվում են սոցիալական արդարության սկզբունքների կենսագործման ու զարգացման հետ։ VI գլուխը ներկայացնում է սպառման կուլտուրան։ Գիրքն ունի ամփոփում և ծանոթագրություններ։

Պատասխանատու խմբագիր՝ Գ. Ա. Պոդոսյան։

ԼԻԱՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ—Գրաբարի բառակազմությունը, *Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987, 375 էջ։*

Աշխատությունը ներկայացնում է գրաբարի բառակազմական համակարգի ամբողջական նկարագրությունը։ Հենվելով V դարից մեզ ավանդված մատենագրության բառապաշարի վրա՝ հեղինակը տալիս է պարզ և բաղադրյալ կազմությունների սահմանազատումը, բաղադրյալ կազմությունների մեջ բառակազմական արժեք ունեցող միավորների և դրանց կառուցվածքային ու գործառական առանձնահատկությունների բացահայտումը։ Հատուկ ուշադրություն է դարձված ածանցման կաղապարներին (նախածանցում, վերջածանցում, խառը տիպի կաղապարներ, բայակազմություն)։ Գիրքն ունի Եզրակացություններ և Ծանոթագրություններ բաժինները, օգտագործված գրականության ցանկ և համառոտագրություններ։

Գրքի պատասխանատու խմբագիր՝ Լ. Շ. Հովհաննիսյան։

ԿԱՐԵՆ ՅՈՒԶԲԱՇՅԱՆ—Ակադեմիկոս Հովսեփ Օրբելի, *Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1988, 111 էջ։*

Գրքում ներկայացվում են ականավոր հայագետ-արևելագետ, գիտության մեծ գործիչ, ակադեմիկոս Հովսեփ Օրբելու կյանքը և գործունեությունը։ Լուսաբանվում են Հ. Օրբելու գիտական ժառանգությունը, նրա նշանակալի դերը հայրենական արևելագիտության, հատկապես հայագիտության ընթացքի և ուղղվածության մեջ։ Փաստական հարուստ նյութի հիման վրա ցույց է տրվում, որ Հ. Օրբելու անունը ընդմիշտ կապված է հայ միջնադարյան մշակույթի փառքը կազմող Անիի ուսումնասիրության և հերոսական «Սասնա ծռեր» վեպի հրատարակման հետ։ Գիրքն ունի ծանոթագրություններ և հապավումների ցանկ։

Պատասխանատու խմբագիրն է Պ. Մ. Մուրադյանը։

ԴԱՎԻԹ ԳԱՍՊԱՐՅԱՆ, ՍԻԼՎԱ ԲՈԴՈՍՅԱՆ, ՎԱՉԵ ՍԱՖԱՐՅԱՆ—Հայ սովետական պոեզիայի պատմություն (1920—1970), *Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987, 627 էջ։*

Գիրքը ներկայացնում է հայ սովետական պոեզիայի պատմական զարգացման կեսդարյա (1920—1970) ուղու պատկերը։ Նախ խոսվում է 1920-ական թվականներին նոր նյութի ու նոր ձևի որոնումների, վիպականության և ռեալիզմի (I գլուխ), ապա 1930-ական թվականների դրական շարժման, խոհական-փիլիսոփայական պոեզիայի և քնարերգության անցած ուղու մասին

(II գլուխ)։ 1941—1945 թվականների ռազմակոչի ահազանգերը, մաքառումն ու պայքարը, սպասումն ու հաղթանակը ամփոփված են III գլխում։ Հետպատերազմյան՝ 1946—1953 և 1954—1970 թվականների պոեզիայի տեսական-գեղագիտական նախադրյալների, ժամանակի շարժման ու «հոգու դիալեկտիկայի» հարցերը ներկայացված են գաղափարական-հոգեբանական ելակետից (IV—V գլուխներ)։ Ե. Չարենցի, Գ. Մահարու, Ն. Զարյանի, Գ. Սարյանի, Հ. Շիրազի, Գ. Սևակի, Հ. Սահյանի, Ս. Կապուտիկյանի, Վ. Դավթյանի, Գ. Էմինի և այլոց ստեղծագործական զարգացման ուղին ներկայացված է համակողմանիորեն։ Գիրքն ունի ծանոթագրություններ։

Պատասխանատու խմբագիրներ՝ Ս. Բ. Աղարաբյան, Դ. Վ. Գասպարյան, Ա. Գ. Ջաքարյան։

ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆ—Երկերի լիակատար ժողովածու (3 հատորով), հ. 3, *Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987, 720 էջ։*

Դ. Վարուժանի Երկերի լիակատար ժողովածուի 3-րդ հատորի լույս ընծայմամբ ավարտվեց մեծ բանաստեղծի ստեղծագործությունների ակադեմիական հրատարակությունը։ Հատորն ընդգրկում է Դ. Վարուժանի արձակը, հոդվածները, ելույթները, նամակները, ինչպես նաև չպահպանված և մեզ չհասած նամակներից (որոնց գոյության փաստը պարզված է նրա գրած ու ստացած նամակների և այլ աղբյուրների օգնությամբ) պատառիկներ։

Հատորն ունի Ծանոթագրությունների բաժին, անձնանունների և տեղանունների բառարան, բնագրերում հիշատակված պարբերականների անվանումներ, բառարան։

Հատորի խմբագիր՝ Ա. Ս. Շարուրյան։

ԲԱԲԿԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ—Հովհաննես Աբելյան. կյանքի և ստեղծագործության տարեգրություն. 1865—1936, *Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987, 371 էջ։*

Հայ մեծ դերասան Հովհաննես Աբելյանի կյանքին և ավելի քան կեսդարյա բեմական գործունեությանն է նվիրված այս տարեգրությունը։ Այն ստեղծված է պարբերական մամուլի, արխիվային նյութերի, հուշագրական աղբյուրների ուսումնասիրության հիման վրա։

Հովհ. Աբելյանի ստեղծագործության վերաբերյալ բերված են նաև ժամանակակիցների կարծիքները՝ վերցված թերթերից, ամսագրերից և թատերագիտական գրականությունից։ Գիրքն ունի մատենագիտական տեղեկատու և անվանացանկ։

Պատասխանատու խմբագիր՝ Լ. Հ. Հախվերդյան։

ՅՈՒՐԻ ՀՈՎԱԿԱՆՅԱՆ—Գիտնականի բարոյական պատասխանատվությունը ժամանակակից պայմաններում, *Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987, էջ 157։*

Աշխատությունն ունի հինգ գլուխ։ Առաջին երեք գլուխներում քննվում է գիտնականի բարոյական պատասխանատվության խնդիրը գիտության ու հասարակության զարգացման ընթացքում։ Խոսվում է գիտատեխնիկական հեղափոխության ժամանակակից պայմաններում գիտնականի բարոյական պատասխանատվության կարևորության, դերի ու նշանակության մասին։ IV և V գլուխներում պարզաբանվում են խաղաղության, սպառազինությունների դադարեցման համար պայքարող գիտնականների բարոյական պատասխանատվության բարձրացման ուղիները։ Գիրքն ունի օգտագործված գրականության ցանկ։

Պատասխանատու խմբագիր՝ Վ. Խ. Բաղդասարյան։